




Ս Փ Յ Ո Ւ Ռ Գ Ո Ւ Մ

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՄԻՍ ՎԻԵՆԱՅՈՒՄ

Վիեննայի Աֆրո-Ասիական ինստիտուտը հոկտեմբեր ամսից 1967—1968 տարեշրջանի համար ներկայացնում է ամենամայա հայտագրերի մի ծրագիր՝ «Ժողովուրդների մշակույթ» անվան տակ։ Այս ծրագրի նպատակն է ավստրիացի հասարակությանը ներկայացնել տարբեր ժողովուրդների պատմությունն ու մշակույթը, և ամեն ամիս երկու օր հատկացվում է որևէ ժողովրդի պատմության ու մշակույթին։

Դեկտեմբեր ամիսը նվիրված էր հայ մշակույթին և պատմությանը։

Այս երեկոներին, դեկտեմբերի 6 և 20, մասնակցում էին ամբողջ Ավստրիո հայ գաղութը, «Հայ եկեղեցական միություն» և «Հայ ուսանողներու մշակութային ընկերություն»-ը։

Առաջին երեկույթին բացատրություններով ցուցադրվում են լուսանկարներ ս. Էջմիածնի տաճարի, ս. Հոսիսիսմեի տաճարի, Գեղարդի, Գառնիի, Օշականի եկեղեցիների, Երևանի Մատենադարանի ընտիր ձեռագրերի նկարները։ Հայտագրի երկրորդ մասում կատարվում են վեց երգեր Կոմիտաս վարդապետի, Ալեշանի և Կանաչյանի ստեղծագործություններից՝ օր. Անժել Կարապետյանի կատարմամբ, ընկերակցությամբ դաշնակահար Բաֆֆի Արմենյանի։ Արմեն Գարամանյանը արտասանում է Ալ. Իսահակյանի «Արարատին» քերթվածը և բացատրում գերմաներենով։ Գաղափար տալու համար հայոց լեզվի հնչյունային արտասանության մասին, նա արտասանում է նաև Հերման Հեսսեի «Մշուշին մեջ» քերթ-

վածը՝ Ս. Աշնյանի թարգմանությամբ (Բեյրութ, 1948)։

Երեկոյի վերջում տիկ. Սեդա Վեպրը դաշնամուրի վրա նվագում է Ա. Խաչատրյանի Տոկատան, որից հետո, ստեղծված մտերմիկ մթնոլորտում, օտար և հայ ներկաները հյուրասիրվում են հայ տիկնանց կողմից պատրաստված հայկական համադարձ ուտեիքներով ու զովացուցիչներով։

Հայկական մշակույթի ամսվա երկրորդ երեկոյին կարդացվում են երեք դասախոսություններ։

Առաջինը խոսում է դոկտ. Վ. Յ. Պալըզյանը գերմաներենով՝ «Հայ-թուրքական հարաբերություններ» հարցի շուրջը։ Նկարագրելուց հետո, թե երկու ժողովուրդների կապերը 19—20-րդ դարերի ազգայնականության շարժումների հետևանքով այդքան սուր և դժբախտ բնույթ կրեցին, եզրակացնում է, որ երկու ժողովուրդներն էլ իբրև մնալուն դրացիներ, գոյություն ունեցող հարցերի պատշաճ լուծումից հետո, պիտի գրտնեն համերաշխության ճամփան։

Երկրորդ դասախոսությունը կարդում է Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ Շ. Վրդ. Գրիգորյանը՝ գերմաներեն լեզվով՝ ելույթ ունենալով հայ եկեղեցու կատարած պատմական դերը ժողովրդի կյանքում։ Բաճախոս մարդապետը օրինակներով ցույց է տալիս, թե ի զին ինչպիսի աննկարագրելի զոհողությունների, հաւ ժողովուրդը կապված է մնացել իր մայրենի եկեղեցուն, գիտակցելով, թե իր քաղաքական ու մշակութային արժեքները ամբողջական են միայն նրանով։

Վերջին դասախոսությունը կարդում է պատմական գիտություններու ավագ ուսանող Ֆ. Սաքլատնիկը, խոսելով օտարների՝ հայերի վերաբերյալ ունեցած ծանոթությունների և կարծիքների մասին: Ելնելով իր անձնական տպավորություններից, նա ասում է, որ հասարակ եվրոպացին հայերի մասին շատ քիչ, երբեմն էլ միակողմանի կարծիք ունի: Մյուս կողմից նա շեշտում է, որ պատմությամբ ու մշակույթով զբաղվողներ շատ մոտից ծանոթ են հայոց պատմությանը, գրականությանը, ճարտարապետությանը ու երաժշտությանը, և հայ ժողովրդին

համարում են աշխատասեր, տաղանդավոր և խաղաղության ձգտող ժողովուրդ:

Երեկույթի եզրափակմանը ամփոփելով հայկական ամսի նվիրված նյութերն ու տպավորությունները Աֆրո-Ասիական ինստիտուտի գործադիր-տնօրեն Ֆ. Ե. Բիստերը շնորհակալություն է հայտնում մասնակիցներին և ընդգծում նման միջոցառումների կարևորությունը հայ ժողովրդի և այլ ժողովուրդների պատմությունը, մշակույթն ու կենցաղը ներկայացնելով միջազգային ուշադրությանը:

**ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՉ ԿՐԵՏԵԻ ԻՐԱՔԼԻՈՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ
Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ Մայր Աթոռի մշտական ներկայացուցիչ և Վիեննայի հայոց հոգևոր հովիվ հոգ. տ. Մեսրոպ Ծ. վրդ. Գրիգորյանը 1967 թ. օգոստոսի 21-ին մասնակցել է Կրետեի Իրաքլիոն քաղաքում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համաժողովին:

Տ. Մեսրոպ Ծ. վարդապետը այս առթիվ պատարագել է նաև տեղի հայոց ս. Հովհաննես եկեղեցում և, հաղորդելով Ամենայն Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, բանին կենաց քարոզությամբ՝ մխիթարել է հայ համայնքին:

